

## Արմինե Տիգրանյան

### ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԹՐԱՍՏԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ. ՍԿԶԲՈՒՔՆԵՐԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԳՈՐԾՆԹԱՑՆԵՐԸ

**Քանալի բառեր.** մշակութային ժառանգություն, պահպանության թրաստային համակարգ, քաղաքացիական նախաձեռնություններ, պահպանության պետական ընկալումներ, համայնական պահպանություն:

Մշակութային ժառանգության պահպանության խնդիրը առանցքային կարևորություն ունի ցանկացած պետության մշակութային քաղաքականության թե՛ ազգային և թե՛ միջազգային մակարդակում: Այսօր միջազգային հանրությունը իր բազմաթիվ կոնվենցիաների, հռչակագրերի և համաժողովների ժամանակ հաստատում է մշակութային ժառանգության համայնքային պահպանության և տվյալ ոլորտի զարգացման ոչ պետական սեկտորի ակտիվության անհրաժեշտությունը՝ շեշտելով, որ տեղական համայնքների մեկուսացումը իրենց արժեքներից ձախողման մարտահրավեր է պահպանության ցանկացած ծրագրի համար<sup>1</sup>: Միայն համայնքների շնորհիվ է, որ ավանդույթները կարող են պահպանվել և փոխանցվել հաջորդ սերունդներին<sup>2</sup>:

Մշակութային ժառանգությունն այն գործոններից է, որը նպաստում է համայնքի սոցիալական կապիտալի ամրապնդմանը<sup>3</sup>, կոլեկտիվ որոշումներ կայացնելու ընդունակությանը, նպաստում ազգային արժեհամակարգի ձևավորմանը, սոցիալական համախմբմանը, քաղաքացիական ինքնագիտակցության բարձրացմանը: Համայնքի զարգացման տեսլականում այսօր ամբողջ աշխարհում շրջանառվում է մշակութային ժառանգության ունեցած այս կարևոր դերակատարումը<sup>4</sup>, վերջինս դիտարկելով հենց այն առանցքներից մեկը, որի շուրջ պետք է ծավալվի համայնքի կայուն զարգացումը<sup>5</sup>: Եվ աներկբա է, որ պահպանության խնդրի հիմնավոր լուծման համար միայն պետության մասնակցությունը արդյունավետ չէ. մոտեցումները պետք է լինեն բազմակողմանի<sup>6</sup>, քանի որ պահպանման գործընթացը կարիք ունի հանրային, մասնավոր և ոչ պետական սեկտորների ներգրավվածության ոչ միայն նախաձեռնողականության, այլև գործնական իմաստով:

Այս խնդրի պարզաբանումը շատ պարզ է. ժառանգությունը իր բնույթով «հասարակական» ֆենոմեն է, հետևաբար վերջինս, բացի պետականից, պետք է լինի նաև հասարակական վերահսկողության և ղեկավարման գործընթացում:

Մշակութային ժառանգության համայնական և ոչ պետական սեկտորի ներգրավվածության կարևորության մասին բազմիցս հնչել է նաև միջազգային հարթակներից: Այսպես. ՄԱԿ-ը համայնքի զարգացումը դիտարկում է որպես գործընթաց, որտեղ մարդիկ միավորված են իշխանությունների հետ՝ բարելավելու իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային պայմանները, քանի որ համայնքները՝ ինտեգրվելով

<sup>1</sup> Sanders I.T., “Theories of Community Development”, Rural Sociology 23(1), 1958, p. 1- 12.

<sup>2</sup> Turner K. Managed re-alignment as a coastal management option. Biological Journal of the Linnean Society 56 (Suppl.), 1995., pp 217-219.

<sup>3</sup> UNESCO “Culture: a driver and an enabler of sustainable development” Thematic Think Piece, [http://www.un.org/millenniumgoals/pdf/Think%20Pieces/2\\_culture.pdf](http://www.un.org/millenniumgoals/pdf/Think%20Pieces/2_culture.pdf), (20.05.2018).

<sup>4</sup> Macdonald S., Cheong C., “The Role of Public-Private Partnerships and the Third Sector in Conserving Heritage Buildings, Sites, and Historic Urban Areas”, The Getty Conservation Institute, Los Angeles, 2014, p.12.

<sup>5</sup> Christenson, J.A., Robinson, J.W. Community Development in Perspective. Iowa State University Press, Ames Iowa. 1989, p.25-28.

<sup>6</sup> Fox C., Composition and structure of Tripartite partnership, 2016, p.18.

երկրի կյանքին, հնարավորություն են ստանում ներդրում ունենալ ազգային առաջընթացին<sup>1</sup>:

Համայնքները, որպես մշակութային ժառանգության պահպանության գործիք, մեծ նշանակություն ձեռք բերեցին ՄԱԿ-ի «Հազարամյակի զարգացման նպատակներում», որպես մեխանիզմներ, որոնք կօգնեն ոչ միայն պահպանության բուն գործընթացի արդյունավետության բարձրացմանը, այլև կնպաստեն ծայրահեղ աղքատության հաղթահարմանը և կայուն զարգացմանը: ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային մշակութային ժառանգության 12-րդ ասամբլեայի 1999 թվականի կոնվենցիայում ևս շեշտվեց, որ առանց լայն հասարակության ըմբռնման և աջակցության, առանց ժառանգության հանդեպ հարգանքի և ամենօրյա խնամքի, գումարի ոչ մի չափ և ներդրումային ոչ մի ծրագիր չի բավարարի վերջինիս պահպանությանը<sup>2</sup>: Եվրոպայի խորհուրդը 2005 թվականին ևս ճանաչեց մասնավոր հատվածի առաջադեմ դերը ժառանգության կառավարման մեջ<sup>3</sup>: Իսկ 2007 թվականի հունիսին «Համաշխարհային ժառանգության կոմիտեն» ընդունեց ռազմավարական ծրագիր. «Ռիժեղացնել և կարևորել համայնքի դերը համաշխարհային ժառանգության պահպանության գործում<sup>4</sup>»:

Վերոնշյալ բոլոր միջազգային կառույցներին անդամակցած երկրները, այդ թվում Հայաստանի Հանրապետությունը, ընդունում են ընդհանուր քաղաքականություն, որի նպատակն է մշակութային և բնական ժառանգությունը համայնքի կյանքում «գործառույթ» դարձնել<sup>5</sup>: Առաջնային ճանապարհը, որը տանելու է դեպի այդ նպատակը, պետք է լինի համաշխարհային ժառանգության պաշտպանությանը տեղական համայնքի և քաղաքացիական հասարակության մասնակցության դյուրացումը<sup>6</sup>: Իսկ վերոնշյալ նպատակը իրագործելի կլինի նախևառաջ ժառանգության պահպանության պետական քաղաքականության հանրային ընկալումներից հրաժարման, հասարակական սեկտորի և համայնքի ակտիվության, ինչպես նաև ժառանգության պահպանությունը «քաղաքացիական պարտավորություն» դարձնելու «քաղաքականության» մեջ: Թեև ՀՀ մշակույթային քաղաքականության դիտարկումները ցույց են տալիս, որ համայնքները օժտված են երկրի մշակութային կյանքում դերակատարում ունենալու իրավունքներով, բայց, այնուամենայնիվ, վերջինիս գործնական կիրառման համար չկա այդ իրավունքները իրացնելու համապատասխան դաշտ, քանի որ ՀՀ մշակույթի քաղաքականությունը, սկսած 1991 թվականից, շարունակում է մնալ «պետական»՝ իր բոլոր դրսևորումներով:

Դիտարկելով համաշխարհային գործընթացները՝ պետք է ասել, որ 21-րդ դարում ամբողջ աշխարհում մշակութային ժառանգությունը գտնվում է միջավայրի վնասակար ազդեցության, անտեսման և կոնֆլիկտների բախման կիզակետում. գլոբալիզացիան, ազգամիջյան և տարածաշրջանային կոնֆլիկտները, պատերազմները, անհանդուրժողականությունը, ժողովրդագրական փոփոխությունները, կլիմայի ազդեցության վնասակար հետևանքները այն հիմնական գործոններն են, որոնք անմիջականորեն ազդում են պատմական միջավայրի պահպանման վրա: Բայց պետք է ասել, որ համաշխարհային հանրությունը վերջին շրջանում այլ կերպ է դիտարկում մշակութային ժառանգության սպառնալիքների առաջնահերթության հարցը: ԻՆԹՈՒ-ն (Ազգային թրաստների միջազ-

<sup>1</sup> Biggs, S. Community Capacity Building in Queensland: The Queensland Government Service Delivery Project. Unpublished paper. Office of Rural Communities, Brisbane, Queensland, 1999.

<sup>2</sup> 12th General Assembly of the World Heritage Convention (UNESCO, 1999), 22nd session of the World Heritage Committee (Kyoto, 1998), document WHC-98/CONF.203/18, p. 10.

<sup>3</sup> Council of Europe, Parliamentary Assembly, "The Private Management of Cultural Property," 2005, <http://assembly.coe.int/Main.asp?link=/Documents/AdoptedText/ta05/EREC1730.htm> (20.05.2018).

<sup>4</sup> World Heritage Committee Decisions 31.COM/13A and 31.COM/13B, 2007, Այս համաձայնագրում «համայնքները» ներառում են ոչ պետական կառույցների բոլոր ձևերը. քաղաքացիների ամենափոքր խմբերից սկսած մինչ քաղաքացիական կազմակերպություններ: Համայնքների որոշիչ բնութագիրը, այն է, թե ինչպես են նրանք գործում:

<sup>5</sup> World Heritage Convention. Article 5 (a).

<sup>6</sup> Pressouyre, L. (1992). The World Heritage Convention, Twenty Years Later. (UNESCO, Paris). 14-15, 22, Cattaneo, M & Trifoni, J. (2003). The World Heritage Sites of UNESCO: Nature Sanctuaries (WhiteStar, Vercelli). 6, 66, 70, 80, 93, 100-101.

զային կազմակերպությունը) աշխարհի 76 երկրների ավելի քան 8 մլն. անդամների շրջանում անցկացրած հետազոտության արդյունքում բացահայտեց, որ մշակութային ժառանգության ամենամեծ սպառնալիքը **անտարբերությունն** է պետության և ժողովրդի կողմից, հանրային իրազեկման ցածր մակարդակը և ժառանգության ներքին արժեքը հասկանալու խնդիրը<sup>1</sup>:

Մշակութային ժառանգության պահպանության արդի մարտահրավերները մեծ են նաև ՀՀ-ում և անհրաժեշտություն կա վերանայելու վերջինիս պահպանությանն ուղղված քաղաքականությունը՝ ակտիվացնելով ոչ միայն պետության, այլև ոչ պետական կազմակերպությունների, կամավորների, քաղաքացիական հասարակության և համայնքի անդամների դերը պահպանությանն ուղղված գործնական ծրագրերում:

Այսօր մշակույթի հանդեպ տարվող հայաստանյան քաղաքականությունը ունի մի շարք խնդիրներ. Հայաստանի քաղաքացիական հասարակությունը դեռևս տուժում է «հասարակական կազմակերպությունների» սովետական ժառանգությունից և դրա սոցիալ-հոգեբանական բեռից, ինչն իր ազդեցությունն է ունենում նման կազմակերպությունների նկատմամբ հանրային վստահության և նրանց ցուցաբերվող աջակցության վրա: Քաղաքացիները պետությանը դեռևս համարում են պատասխանատու հասարակության ընդհանուր բարեկեցության համար: Այս երևույթը դիտվում է նաև մշակութային ժառանգության պահպանության բնագավառում: Ուստի, այս ոլորտում առկա են լուրջ մարտահրավերներ, քանի որ հասարակության անտեղյակությունը, անտարբերությունը, համապատասխան գիտելիքի պակասը, պահպանության համակարգը ավելի մասնագիտական ոլորտին վերագրելը կարող է հանգեցնել լուրջ խնդիրների:

1922-1991 թվականներին՝ Հայաստանում խորհրդային կարգերի տարիներին, երկրում քաղաքացիական հասարակության հատվածի զարգացումը կրել է սոցիալիստական համակարգի տիրապետող ինստիտուցիոնալ կառուցվածքի ազդեցությունը: Գոյություն ունեցող ֆորմալ կազմակերպությունները և միավորումները վերահսկվում էին ավտորիտար պետության կողմից, մինչդեռ ցանկացած անկախ քաղաքացիական միավորում կամ գործողություն դիտարկվում էր որպես վտանգ պետական իշխանությանը<sup>2</sup>: Խորհրդային շրջանի «հասարակական» կազմակերպությունները մեծամասամբ ծառայում էին պետությանը և կուսակցությանը՝ իրենց առաքելությամբ և գործունեությամբ սատարելով կոմունիստական գաղափարախոսությունը, այլ ոչ թե կամավոր նախաձեռնությունների միջոցով բավարարելով հանրային կարիքները<sup>3</sup>: Սա հանգեցրեց Հայաստանում ֆորմալ քաղաքացիական հասարակության անկմանը: Այս խնդիրը հասկանալու համար, մեջբերում են Խորհրդային Հայաստանի մշակութային քաղաքականության ուշագրավ հայտարարություններից մեկը, այն է 1923 թվականի դեկտեմբերին ժողկոմխորհի «Հնությունների պահպանության մասին» դեկրետը, որի 1-ին հոդվածում նշվում էր. «Հայաստանի տարածքում գտնվող բոլոր հուշարձանները, անկախ դրանց պահպանվածության վիճակից, հանդիսանում են պետական սեփականություն և անձեռնմխելի են», իսկ 1924 թ. կոմիտեի նոր կանոնադրության մեջ նշվում էր. «Հնությունների կոմիտեն հանդիսանում է գլխավոր պետական մարմինը, միակը հանրապետությունում, որին տրված է հնության հուշարձանների հաշվառման, պահպանման բոլոր լիազորությունները<sup>4</sup>»: Այս և այլ շատ օրենքներ ու այլ իրավական ակտեր փաստում են, որ Խորհրդային Հայաստանում կամ սահմանափակված էր, կամ ընդհանրապես արգելված էր հասարակության մասնակցությունը ժառանգության պահպանության գործնական ծրագրերին:

<sup>1</sup> “The state of global heritage”, A report by the international trust organization, 2016, p.4.

<sup>2</sup> Բաբաջանյան Բ., «Քաղաքացիական մասնակցությունը հետխորհրդային Հայաստանում»: Կենտրոնափական հետազոտություն, հատոր 24, N. 3, 2005 թ., 261–279:

<sup>3</sup> Բլու Ռ., Ղազարյան Յու., «Հայաստանի ՀԿ հատվածի գնահատում. համեմատական վերլուծություն» Համաշխարհային ուսուցում միջազգային զարգացման համար/ՀԿ հզորացման ծրագիր, Երեւան, 2004:

<sup>4</sup> Սարգսյան Գ.Գ., «Պատմամշակութային հուշարձանների պահպանության հիմունքներ», Ե., Մուղնի, 2005, էջ 11-14:

Անկախացած Հայաստանի Հանրապետությունը ժառանգեց մշակույթի հանդեպ Խորհրդային Միության վարած քաղաքականությունը և հայ ժողովրդի մշակութային ժառանգության պահպանության երաշխավորը, սկսած 1991 թ., դարձավ Հայաստանի Հանրապետությունը: Երջակա միջավայրի, պատմության ու մշակույթի հուշարձանների և մշակութային այլ արժեքների պահպանությունը «Սահմանադրությունը հռչակեց որպես **պետության պարտավորություն**<sup>1</sup>: Սահմանադրական այս նորմից բխում են նաև բնագավառին վերաբերող մյուս բոլոր օրենքներն ու իրավական ակտերը և կրում վերջինիս ազդեցությունը:

Խորհրդային Միության կազմալուծումից հետո, Հայաստանն արդեն վավերացրել է մշակութային ժառանգության պահպանության վերաբերյալ շուրջ մեկ տասնյակ կարևոր միջազգային կոնվենցիաներ<sup>2</sup>, բայց գործնականում դրանց կիրառումը, հասարակության տեղեկացվածության մակարդակը, այդ դրույթներով առաջնորդվելու մասին գիտելիքը շատ թերի է. ժառանգությունը որպես զարգացման գործիք կիրառելու հմտությունները դեռևս հայ հասարակության համար կարիք ունեն լրացուցիչ պարզաբանման: Հենց դա է պատճառը, որ վերջինս ժառանգության պահպանությունը համարում է այլ, ավելի «բարձր» մասնագիտական որակումներ ունեցող անձանց պարտավորություն և գործելակերպ: Այդպիսի մտածելակերպի պատճառները մի քանիսն են. նախ, թերի է ժառանգության ընկալման մասին հանրային գիտելիքը, քանի որ հիմնականում ժառանգությունը զնահատվում է արժեքի ֆիզիկական կամ նյութական հատկանիշներով և անտեսվում է դրա ոչ նյութական՝ արժեքային և ինֆորմատիվ կողմը: Երկրորդ պատճառը Խորհրդային Միությունից ժառանգված այն պատկերացումն է, որ ժառանգության հանդեպ իրականացվող քաղաքականությունը միմիայն պետական է և հասարակության դերակատարումը այդ քաղաքականությունը զնահատելու, բացերը նշելու, եզրակացություններ անելու կամ քննադատելու մեջ է: Երրորդ պատճառը ժառանգության պահպանության կարևորության անտեսումն է և, անգամ վերջինիս հանդեպ անտարբերությունը, որը ամենամեծ սպառնալիքն է համարվում: Զորրորդ, Հայաստանում չկա «պետական քաղաքականություն», որը կստեղծի հնարավորություններ հասարակության կողմնակալ ձայնը պահպանության ծրագրերում հաշվի առնելու համար, և թույլ է նաև ոչ պետական դաշտի ակտիվությունը այս խնդրում, իսկ ոլորտի կառավարման մասնագիտական որակը և մասնագետների ներգրավումը պահպանության ծրագրերին ևս կաղում է: Քաղաքացիական, բարեգործական և այլ բնույթի կազմակերպությունների դերակատարումը կրում է մեծամասամբ սոցիալական բնույթ և սահմանափակվում այս կամ այն հուշարձանի վերանորոգման և տարածքի բարելավման համար ներդրված միջոցներով, կամ էլ որոշ ծրագրեր ու փառատոններ հովանավորելով, բայց կոնկրետ արժեքների պահպանությամբ զբաղվող կազմակերպությունները կամ շատ քիչ են և կամ էլ չունեն հասարակական մեծ ընդգրկվածություն: Հինգերորդ, կամավորական ընդգրկունություն ունեցող ՀԿ-ների գործունեության ուսումնասիրությունն էլ ցույց տվեց, որ կամավորական նախաձեռնությունները լավագույն դեպքում սահմանափակվում են այս կամ այն հուշարձանի տարածքի մաքրման աշխատանքներով, և այն էլ հազվադեպ և հատուկ առիթներով: Մշակութային ժառանգության պահպանության գործում ամե-

<sup>1</sup> «Սահմանադրության 11-րդ հոդված. «Պատմության և մշակույթի հուշարձանները, մշակութային այլ արժեքները գտնվում են պետության հոգածության և պաշտպանության ներքո»: (Ընդունվել է 1995 թ. հուլիսի 5-ի ՀՀ հանրաքվեով, փոփոխությունները՝ 2005 թ. նոյեմբերի 27-ին ՀՀ Հանրաքվեով):

<sup>2</sup> «Զինված կոնֆլիկտների դեպքում մշակութային արժեքների պաշտպանության կոնվենցիա» (Հաագա, 1954թ., Հայաստանը վավերացրել է 1993 թ.), «Համաշխարհային մշակութային և բնության ժառանգության պահպանության կոնվենցիա» (Փարիզ, 1972 թ., վավերացվել է 1993 թ.), «Ոչ-նյութական մշակութային ժառանգության պահպանության կոնվենցիա» (Փարիզ, 2003 թ., վավերացվել է 2006 թ.), «Մշակութային ինքնարտահայտումների բազմազանության և պաշտպանության և խրախուսման կոնվենցիա» (ընդունվել է 2005 թ., վավերացվել է 2007 թ.), «Անագիտական ժառանգության պաշտպանության կոնվենցիա» (Վալետտա, 1992 թ., վավերացվել է 2004 թ., ուժի մեջ է մտել 2005 թ.), «Եվրոպական մշակութային կոնվենցիա» (Փարիզ, 1954 թ., վավերացվել է 1997 թ.), «Հասարակության համար մշակութային ժառանգության նշանակության մասին Եվրոպայի խորհրդի շրջանակային կոնվենցիա» (Ֆարո, 2005 թ., վավերացվել է 2012 թ.) և այլն:

նամեծ դերակատարումը ունեն պահպանությանն ուղղված քաղաքացիական նախա-  
ձեռնությունները, որոնք ճեղքելով «իշխանական պատը», որոշ դեպքերում կարողացել  
են հաջողությունների հասնել:

Վերոնշյալ մարտահրավերների պատասխանը համակարգային առումով կարող է  
տալ մշակութային ժառանգության պահպանության թրաստային համակարգը<sup>1</sup>, որի  
ակունքները գալիս են դեռևս 19-րդ դարից և մեծ թափով զարգանում են մինչ օրս:

**Ազգային թրաստների բնույթը, գաղափարաբանությունը, տեսակները, պահպանու-  
թյան սկզբունքներն ու գործառույթները:** 19-րդ դարում Արևմտյան Եվրոպայում սկսվեց ոչ  
պետական հասարակական կազմակերպությունների միջազգային շարժում՝  
մշակութային արժեքների պահպանության նպատակով և կոչվեց «Ազգային թրաստ»<sup>2</sup>:  
Թրաստների նպատակը ոչ միայն ժառանգության պահպանությունն է, այլ վերջինիս  
առաջընթացը: Այս ամենը ընդունելով որպես գործունեության սկզբունք՝ ազգային  
թրաստները սկսեցին իրականացնել ժամանակակից հասարակական գործընթացներին  
ժառանգության ինտեգրման ակտիվ քաղաքականություն:

Թրաստները գլխավորապես բնութագրվում են որպես մշակութային ժառան-  
գության պահպանության ոչ պետական, բարեգործական և շահույթ չհետապնդող կազ-  
մակերպություններ, որն էլ հնարավորություն է տալիս նրանց ազատվելու պետական  
հարկերից: Այն քաղաքացիական հասարակության կառույց է. էապես անկախ և ինքնա-  
վար գործունեությամբ, ապահովում է կառավարությունից անկախ տեսակետ, բայց  
միևնույն ժամանակ կարող է մեծացնել կառավարության հետաքրքրությունը առա-  
ջադրված խնդիրների շուրջ: Թեև թրաստը կարող է ստեղծվել կառավարության օ-  
րենսդրության հիման վրա կամ ստանալ պետական ֆինանսավորում, սակայն պետք է  
անկախ լինի կառավարական ազդեցությունից իրականացրած գործողությունների և  
քաղաքականության առումով:

Թրաստները, ստեղծվելով 19-րդ դարի կեսերին, շարունակում են իրենց հաղթ-  
արշավը 21-րդ դարում՝ անդամակցության ծավալները հասցնելով մինչև 8 մլն.-ի աշ-  
խարհի շուրջ 76 երկրներում: Եվ այսպես, 1844 թ. անդամները մի քանիսն էին, 1885 թ.՝  
մի քանի տասնյակ, 1970 թ.՝ 226 հազար, իսկ 1975 թ.՝ 500,000, մեկ մլն՝ 1981 թ., 2 մլն՝  
1990, 2011 թ.՝ 4 մլն և 2018 թ. արդեն՝ 8 մլն անդամ:

«Ազգային Թրաստ»-ի կոնկրետ սահմանում չկա, քանի որ աշխարհի տարբեր  
կազմակերպություններ, որոնք ձանաչվում են որպես «Ազգային թրաստ»-ներ, զար-  
գացել են իրենց հատուկ հանգամանքներում և ունեն իրենց ինքնատիպ կառավարման  
համակարգը, բայց, իհարկե, կան սկզբունքներ, որոնք ընդհանուր են բոլոր թրաստների  
համար.

- բարեգործական, շահույթ չհետապնդող, անդամակցության լայն հնարավորու-  
թյուններով ժառանգության պահպանությանն ուղղված քաղաքացիական հասարակու-  
թյան կառույց՝ հիմնված համայնքի վրա և ստեղծված հասարակական շահի համար,  
որի նպատակը ոչ միայն մշակութային ժառանգության պահպանումն է, այլև վերջինիս  
գործնական կառավարումը,

- իշխանությունից անկախ, կուսակցական պատկանելությունից զերծ կազմակեր-  
պություն, որը ունի կարողություն մշակելու, գնահատելու, վերլուծելու և նպաստելու  
մշակութային ժառանգության պահպանությանը,

- ժառանգության համար կարևորագույն տարածքների պահպանության մասին  
հանրային գիտելիքի և իրազեկվածության բարձրացում ապահովող և կամավորական

<sup>1</sup> D. J. Taboroff , Heritage Trusts: Creating Opportunities for Public Participation in Cultural Conservation, A  
Handbook, 2002, p.4.

<sup>2</sup> «Թրաստ» տերմինի ստուգաբանությունը իսպաներենից և այլ լեզուներից միանշանակ չէ, նրան մոտ  
բացատրությունը “fideicomoso” տերմինն է, որը թարգմանաբար նշանակում է «վստահություն»:

հիմք<sup>1</sup> ունեցող կազմակերպություն, որը բաց է հասարակության բոլոր անդամների համար և ունի կրթադաստիարակչական նշանակություն:

Ազգային թրաստների նպատակն է.

- ունենալ համայնք, որը գիտակցում, գնահատում և պաշտպանում է ժառանգությունը<sup>2</sup>,

- զարգացնել հասարակական կրթական ռեսուրսը ժառանգության տարածքների և օբյեկտների նկատմամբ՝ դասախոսությունների, սեմինարների, ցուցահանդեսների, հանդիպումների և կոնֆերանսների միջոցով, ակտիվացնել ժառանգության մասին հանրային գիտելիքը փառատոնների, միջոցառումների, տեղեկատվական տեխնոլոգիաների, լրատվական ցանցի և համագործակցության ակտիվության միջոցով<sup>3</sup>:

Թրաստի գործառույթներն են.

- կառույցների, հուշարձանների, պատմական, ճարտարապետական և հնագիտական հետաքրքրություն ներկայացնող տարածքների (իրենց կենդանական, բուսական կյանքով միասին) ցուցակագրումը, արժեքի թե՛ ֆիզիկական և թե՛ ինֆորմատիվ պոտենցիալի ներկայացումը,

- մշակութային ժառանգության ամբողջականության պահպանումը իր նյութական և ոչ նյութական դրսևորումներով(թրաստի պահպանության սկզբունքները կնշենք ստորև), հասարակությանը այդ մասին իրազեկումը,

- մշակութային արժեքների պահպանության և պատմական միջավայրի արժեքի ճանաչման խթանումը քաղաքացիական հասարակության և կառավարության միջև, քաղաքացիական հասարակության աջակցության և մասնակցության զարգացումը, ժառանգության հանդեպ հոգածության խթանումը,

- փորձի փոխանակումը՝ խրախուսելու լավ պրակտիկայի տարածումը,

- մշակութային զբոսաշրջության և մշակութային տուրիզմի խթանումը:

Ժառանգության պահպանությունը թրաստների համար առանձնահատուկ է, քանի որ նրանք այդ արժեքների որոշ մասի նկատմամբ ունեն սեփականության իրավունք և վերջինիս մեծ մասը չի կարող վաճառվել կամ փոփոխվել<sup>4</sup>: Ժառանգության անքակտելիության իրավունք ունեն շատ թրաստներ, որոնցից են Մեծ Բրիտանիայի, Սլովակիայի թրաստները: Երկարաժամկետ պահպանության ծրագիրը թրաստի հիմնական ուժն է հանդիսանում<sup>5</sup>:

«Թրաստային համակարգը պահպանությունը իրականացնում է հանրամատչելիության սկզբունքով, իսկ պահպանման գործընթացը բաց է բոլոր նրանց համար, ովքեր ցանկություն ունեն օգնելու<sup>6</sup>: Պահպանությունը իրականացվում է ոչ թե ժառանգությունը քարացնելով, այլ այն ավելի դինամիկ դարձնելով: Թրաստը մշակել է ժառանգության պահպանության հետևյալ սկզբունքները.

- ժառանգության ցանկացած արժեքի դեպքում պահպանությունը ունի հետևյալ գործընթացները. ժառանգության ուսումնասիրություն, հետազոտություն, գնահատում, արժեքի կարևորության որոշում, վերլուծություն, պահպանության քաղաքականության մշակում, նպատակների և խնդիրների առաջադրում, մշակված ծրագրին համապատասխան կառավարում, մոնիտորինգ և վերանայում,

<sup>1</sup> Շատ թրաստների հիմքը կամավորներն են, ովքեր իրականացնում են կրթական ծրագրերից մինչև պահանջարկի ուղղված կոնկրետ գործողություններ՝ միավորելով մշակութային և բնական ժառանգության ռեսուրսների կառավարումը:

<sup>2</sup> The charter for the national trust, <https://www.nationaltrust.org.au/wp-content/uploads/2015/10/Charter.pdf>, (20.05.2018).

<sup>3</sup> Australian Securities & Investment Commission A Company Limited by Guarantee Constitution of National Trust of Australia (A.C.T.) ACN 008 531 182, p.1-24.

<sup>4</sup> Pulen D. The constitution of National trust, p.83-84.

<sup>5</sup> Turner K. 1995. Managed re-alignment as a coastal management option. Biological Journal of the Linnean Society 56 (Suppl.), pp 217-219.

<sup>6</sup> National Trust Annual Report 2014/15, The National Trust in Brief, Swidon, p.3-8:

- պահպանություն ներկա և ապագա սերունդների բարօրության համար, որը ունի երկարաժամկետ նպատակներ և հաստատուն սկզբունքներ,<sup>1</sup> պետք է ուղղված լինի ինչպես ազգային, այնպես էլ համամարդկային պահպանությանը,

- պահպանությունը պետք է հաշվի առնի ժառանգության կարևորության բոլոր ասպեկտները և հիմնված լինի գիտելիքի և ըմբռնողականության վրա, ձգտի պահպանել մշակութային և բնական բազմազանությունը իր տեղական առանձնահատկություններով և մշակութային ենթատեքստով,

- պահպանման գործընթացները պետք է լինեն թափանցիկ և պատշաճ կերպով արձանագրվեն, վերահսկվեն և պարբերաբար վերազնահատվեն,

- պահպանումը պետք է ձգտի վերացնել կոնֆլիկտները

- պահպանման ցանկացած գործողություն պետք է ունենա նվազագույն բացասական ազդեցություն, և իրականացվի ծրագրային կառավարման համակարգով<sup>2</sup>:

Թեև թրաստները բնության պահպանության ամենակայուն կառույցներն են համաշխարհային մակարդակում, բայց նրանց առաջ շարժվելու համար անընդհատ փոփոխություններ են անհրաժեշտ, որոնք կայունացնում են թրաստի գործունեության ծրագիրը<sup>3</sup>: Փոփոխականությունը բնորոշ է բոլոր համայնքներին, և եթե համայնքի կողմից արժեքը ավելի լավը դարձնելու ցանկություն կա, ապա հենց դա է պահպանման քաղաքականության փրկող ուժը<sup>4</sup>:

Ինչ վերաբերում է թրաստների տեսակներին, ապա նրանք կարող են ճկուն լինել իրենց կազմակերպության տեսակը որոշելու մեջ, նրանք կարող են լինել ինչպես «Ազգային»՝ ընդգրկելով երկրի մշակութային ժառանգության ողջ ծավալը, այնպես էլ կարող են ստեղծված լինել հատուկ կառույցի, տարածքի, քաղաքի կամ գյուղի պահպանության համար: Առավել հաջողված թրաստները նրանք են, որոնց քաղաքականությունը ժամանակի ընթացքում է զարգանում՝ արձագանքելով կոնկրետ համայնքների կարիքներին: Եվ այս կոնտեքստում թրաստները կարող են ունենալ ազգային, տարածաշրջանային և քաղաքային կամ այլ առաքելություն:

Ըստ գործունեության բնույթի Ազգային թրաստները կարող են լինել 3 հիմնական ձևի.

- ինքնավար քաղաքացիական հասարակության կազմակերպություններ,
- կառավարական կազմակերպություններ՝ շատ դեպքերում կիսահիմնավար,
- խառը՝ միքսված:

**1. Ինքնավար քաղաքացիական կառույցներ:** Ազգային թրաստների հիմնական և գերակշռող մասը հենց այսպիսին է, և նրանց ֆինանսավորումը կապված չէ կառավարության միջոցների հետ, չնայած իրավասու են պետությունից ստանալու որոշակի գրանտներ կամ հատուկ ծրագրային ֆինանսավորում, որը կարող է համարվել բարեգործություն և տեղի է ունենում օրենքով սահմանված կազով: Նրանց անկախությունը թույլ է տալիս ուժեղ իրավական դեր խաղալ և մարտահրավեր նետել պետական և նեղ մասնավոր շահերին, երբ վերջինս հակասում է պատմական միջավայրի պաշտպանությանը: Հաճախ լրացնում են կառավարության աշխատանքը՝ իրականացնելով հանրային բարօրությանը նպաստող գործողություններ, որոնք երբեմն դուրս են կառավարության գործունեության հիմնական դրույթներից: Այսպիսի թրաստները համարվում են բարեգործական և, համապատասխանում պետության կողմից բարեգործական և նմանատիպ կազմակերպությունների համար սահմանված կանոններին. գործում են անդամավճարների, նվիրատվությունների և բիզնես վարող ընկերությունների նվիրատվու-

<sup>1</sup> National Trust for Scotland, Order Confirmation Acts of 1935- 1973, NTS Order Confirmation Act 1935, p. 5-8.

<sup>3</sup> Holland A, Rawles K., "Values in Conservation. Ecos-A review of Conservation. Gloucester: The British Association of Nature Conservationists", 1993. 14-19.

<sup>4</sup> Motzkin G, Patterson III WA, Drake NER Fire history and vegetation dynamics of Chamaeoparis thyoides wetland on Cape Cod, Massachusetts. Journal of Ecology 81: 1993, pp. 391-402.

թյուններից ստացված եկամուտների վրա: Այդպիսին են Մեծ Բրիտանիայի, ԱՄՆ-ի Վրաստանի, Չեխիայի և այլ ազգային թրաստները:

**2. Կառավարական կամ կիսահիքնավար կազմակերպություններ:** Կան շատ թրաստային կազմակերպություններ, որոնք պետական մարմին են համարվում: Չնայած նրանք հոգում են պատմական միջավայրի պահպանության խնդիրները, այնուամենայնիվ, նրանք չունեն անկախ կարգավիճակ մարտահրավեր նետելու կառավարական որոշումներին: Անձնակազմի աշխատակիցները սովորաբար հավաքագրվում են քաղաքացիական ծառայության կարգին համապատասխան: Նրանց ֆինանսավորումը որոշվում է ազգային բյուջեով, որը երբեմն կարող է լրացվել հատուկ դրամաշնորհներով: Հաճախ նրանք համագործակցում են այլ պետական գերատեսչությունների հետ, ինչպիսիք են զբոսաշրջության կամ կրթության նախարարությունները, ինչպես նաև բուհերը և այլ ուսումնական հաստատություններ: Որպես օրինակ կարող ենք ներկայացնել «Ֆիջիի ազգային թրաստ»-ը, որը կառավարության կողմից ֆինանսավորվող օրինավոր մարմին է. հաստատվելով 1970 թվականին ապահովում է երկրի մշակութային և բնական ժառանգության պաշտպանությունը<sup>1</sup>: Այդպիսին է նաև Տրինիդադ և Տոբագոյի թրաստը, որը գտնվում է պլանավորման և զարգացման նախարարության կազմում:

**Խառը մոդելը կոնկրետ պետական աջակցությամբ:** Խառը մոդելին են պատկանում «Բարբադոսի», «Ավստրալիայի», «Սուրբ Հելենայի», «Ֆալկլանդի թանագարան և ազգային թրաստ» կազմակերպությունները: Նրանք գործում են պետության իրավասության տակ, բայց կարող են ունենալ իրենց գործունեության անկախ ծրագրերը. ինչպիսիք են, օրինակ, կամավորների հավաքագրում, անդամակցություն, կամ իրականացնել այնպիսի միջոցառումներ, որոնք լրացուցիչ ֆինանսական միջոցներ կբերեն թրաստին: Խառը մոդելին պատկանող շատ թրաստներ ևս ժառանգության սեփականատերեր են:

**Թրաստների ֆինանսավորումը:** Թրաստների ֆինանսավորումը իրականացվում է անդամակցության, բաժանորդագրությունների, հովանավորությունների, նվիրատվությունների, ինչպես նաև կառավարության գրանտների միջոցով: Այստեղ ներկայացված են մի քանի առավելություններ, որոնք կունենա թրաստում ներդրումներ անող կազմակերպությունը.

1. թրաստը նվիրատվությունների դիմաց օգնում է կազմակերպություններին զարգացնել իրենց բիզնեսը, և փոխարենը հասարակությունը ունենում է ավելի առողջ բնական միջավայր, 2. ազգային թրաստը բրենդ է, և նրա հետ աշխատելը պատիվ է ցանկացած կազմակերպության համար, 3. թրաստը ապահովում է կազմակերպության գովազդը իր կայքում և ամսագրերում<sup>2</sup>:

Հատկապես կարևոր է թրաստի համագործակցությունը համալսարանների և ուսանողության հետ, ովքեր ուսումնասիրում են այս ոլորտը և ունեն նոր գիտելիք:

**Ազգային թրաստների միջազգային շարժումը:** Ազգային թրաստների միջազգային շարժումը սկսվեց 19-րդ դարի կեսերին և իր առաջին հանգրվանը գտավ Նորվեգիայում: Վերջինիս ազգային թրաստը՝ «Հասարակություն հանուն Նորվեգիայի հուշարձանների պահպանության»՝ հիմնադրվել է 1844 թվականին<sup>3</sup> դառնալով աշխարհում առաջին թրաստային կազմակերպությունը<sup>4</sup>: Նկարիչներ Յո. Քր. Ղահլը և Ջ. Ֆրիչը, իրավաբան Ն.Նիկոլայսեն, պատմաբան Ռ. Կեյսերը դարձան թրաստի կամավոր հիմնադիրները: Այժմ այն իր տրամադրության տակ ունի ավելի քան 40 սեփականություն, որոնց թվում են 8 կանգուն եկեղեցիներ և 4 քարանձավներ: Նորվեգիայի ազգային թրաստից

<sup>1</sup> Խաղաղ օվկիանոսի միակ թրաստն է. իր գործունեության ընթացքում գտնվել է մի շարք նախարարությունների, իսկ այժմ՝ Ֆիջիի կրթության նախարարության կազմում և կառավարվում նախարարի ընտրված խորհրդի կողմից:

<sup>2</sup> Մեծ Բրիտանիայի թրաստի ամսագիրը ունի ավելի քան 3.5 մլն մշտական դիտորդ աշխարհում:

<sup>3</sup> Hagen A, Solberg B., "Foreningen til norske Fortidsminnesmerkens Bevaring", Store norske leksikon. Retrieved October 31, 2015.

<sup>4</sup> Հիմնադրման հիմքը հանդիսացավ Նորվեգիայի գյուղական համայնքներում ակադեմիական հետազոտությունը, և բացահայտվեց, որ ժառանգության պահպանությունը խիստ վտանգված է:



45 տարի անց՝ 1890 թվականին հիմնադրվեց Մասաչուսեթսի պահպանության թրաստը<sup>1</sup> և դարձավ ժառանգության պահպանման ԱՄՆ-ի առաջին մասնավոր շահույթ չհետապնդող կազմակերպությունը<sup>2</sup>: Թրաստը ակտիվ համագործակցում է համայնքի անդամների և Մասաչուսեթսի տարածքի ավելի քան 70 քաղաքների հետ:

Մեծ Բրիտանիայի ազգային թրաստը, ձևավորվելով 1895 թվականին քաղաքացիական ակտիվիստներ Օկտավիա Հիլլի<sup>3</sup>, Քանոն Հարվիզ Ռոունսլեյի և Ռոբերտ Հանթերի կողմից, աստիճանաբար սահմանելով իր գործելակերպի հստակ ուղին, դարձավ աշխարհում ամենամեծ հեղինակությունն ունեցող ժառանգության պահպանությանը նվիրված ոչ պետական կառույցը: Հիմնադիրները հասան նրան, որ առաջին Ազգային թրաստի ստեղծման օրենքը 1907 թվականին տավ Մեծ Բրիտանիայի պառլամենտ<sup>4</sup>: Ուշագրավ է այն փաստը, որ երկրի ամբողջ ժառանգության մեկ երրորդը գտնվում է թրաստների տրամադրության տակ. այն ունի 500-ից ավել ժառանգության կառույցներ, այդ թվում՝ պատմական հուշարձաններ, այգիներ, սոցիալ-պամական տարածքներ, անտառներ, բնական տարածքներ, գյուղեր, կղզիներ:

Ազգային թրաստների շարժումը աստիճանաբար ընդլայնվեց՝ ընդգրկելով Ավստրալիան, Բարբադոսը, Կանադան, Կորեան, Մալթան, Նիդերլանդները, Թայվանը, Ջիմբաբվեյն և այլ շատ երկրներ:

Ավստրալիայի «Ազգային թրաստի» շարժումը սկսվել է 1945 թ. Նոր Հարավային Ուելսում՝ Աննի Ուայթի կողմից, որը մի շարք այլ քաղաքացիների հետ բարձրացրեց Սիդնեյի կառուցված և բնական ժառանգության պահպանության հարցը՝ խոսելով նաև պատմական տարածքների ոչնչացումը կանխելու նպատակով համայնքային գիտակցության բարձրացման մասին: 1950-ականների և 60-ականների ընթացքում շարժումը արագ տարածվեց Ավստրալիայում՝ ստեղծելով թրաստի գրասենյակներ<sup>5</sup> երկրի տարբեր հատվածներում: Յուրաքանչյուր տարածքային թրաստ լիովին ինքնավար կառույց էր՝ պատասխանատու իր գործերի կառավարման համար:

Ավստրալիայում գոյություն ունի նաև տարածաշրջանային թրաստային կազմակերպությունների խորհուրդ՝ (ACNT), որը հանդիսանում է Ավստրալիայի տարածքի 8 Ազգային թրաստները միավորող կազմակերպություն, որոնցից յուրաքանչյուրը պատասխանատու է իր համայնքային խնդիրների համար:

Ազգային թրաստների միջազգային շարժումը 20-րդ դարի երկրորդ կեսին ընդլայնեց իր աշխարհագրությունը և հասավ Բարբադոս, որտեղ 1960թ-ին ստեղծվեց «Բարբադոսի ժառանգության պահպանման թրաստը»: Իսկ Կանադացիների ակտիվ դերակատարությունը ժառանգության պահպանման գործում մեծացնելու նպատակով Ռ.Ա. Ջ. Ֆիլիպսը և նախագահ Հարոլդենդ Մ. Մաքդուգալը 12 մլն դոլար դաշնային նվիրատվությամբ՝ 1973 թ. հիմնադրեցին Կանադայի ազգային թրաստը, որը հիմնադրման պա-

<sup>1</sup> Ունի 126 հզ վարձատրվող անդամներ, 11 հզ հեկտար պահպանման ենթակա տարածք և 116 հատուկ գոտիներ. պատմական կառույցներ, պտղատու և վայրի այգիներ, ջրվեժներ, լեռներ, գետեր, լողափեր, կղզիներ, հնագիտական վայրեր: Մասնաձյուղերն են՝ Բեվերլի, Լեոմինստեր և Շարոն:

<sup>2</sup> Թրաստի ծագումը կարող ենք թվագրել 1890 թ. մարտի 5-ը, երբ Չարլզ Էիլոթը «Այգին և անտառը» պարբերականում թողարկեց "The Waverly Oaks" հոդվածը, որտեղ առաջարկում էր ստեղծել այնպիսի կազմակերպություն, որը բնական տարածքները կպահպաներ այնպես, ինչպես գրադարանն է գրքեր պահպանում և թանգարանը նկարներ: Էլիոթի կոչը և քաղաքացիական նախաձեռնությունը հստակ նրան, որ 1891 թ. օրենսդիրը քվեարկեց կազմակերպության ստեղծման հարցը:

<sup>3</sup> Ազգային թրաստի ստեղծման գաղափարը ծնվեց այն ժամանակ, երբ Օկտավիա Հիլլը Լոնդոնում գտնվող «Sayes Court» այգին պահպանելու համար խնդրեց հասարակության օգնությունը:

<sup>4</sup> The National Trust Acts 1907 - 1971 as varied by a Parliamentary Scheme implemented by The Charities, Order 2005, p.19-26.

<sup>5</sup> Ազգային թրաստները Ավստրալիայի մշակութային ժառանգության պահպանման միակ կազմակերպություններ են, որոնք ընդգրկում են ժառանգության բոլոր ոլորտները՝ բնական և մշակութային, նյութական և ոչ նյութական: Ուշագրավ է, որ կազմակերպությունից ստացված կոլեկտիվ ընդհանուր շահույթը, ընդամենը 10 տոկոսով է քիչ կառավարության տրամադրած ներդրումներից: Տնօրինում է 300-ից ավելի տարածքներ (մեծ մասը անժամկետ), ղեկավարում է 7000 կամավոր աշխատուժ, և վճարում շուրջ 3500 մարդու:

հից ի վեր թրաստը հիմնովին վերականգնել է 75-ից ավելի ժառանգության կառույցներ<sup>1</sup>:

20-րդ դարի երկրորդ կեսին հասունացավ ազգային թրաստների ընդհանուր միության ստեղծման գաղափարը: Սկսած 1970 թվականից աշխարհի ամենատարբեր անկյունների թրաստները միավորվում էին «Թրաստների միջազգային կոնֆերանս»-ի (International Conference of National Trusts (ICNT)) հովանու ներքո տեղեկատվության, լավագույն փորձի փոխանակման, ընդհանուր խնդիրների լուծման համար: Իսկ Ազգային Թրաստների միջազգային 12-րդ՝ Նյու Դելիի համաժողովում ընդունվեց որոշում ստեղծելու «Ազգային թրաստների միջազգային կազմակերպությունը»՝ ԻՆԹՈՒ-ն: Համաժողովում կարևորեց այն փաստը, որ ժառանգության արդյունավետ պահպանության համար անհրաժեշտ է միավորել ժառանգության նյութական և ոչ նյութական, ազգային, տարածաշրջանային և տեղական արժեքները և դրանով հասնել կայուն զարգացման:<sup>2</sup>

ԻՆԹՈՒ-ն կազմավորվեց 2008 թվականի հունվարին և քարտողարությունը տեղակայվեց Անգլիայում՝ «Անգլիայի, Ուելսի և Հյուսիսային Իռլանդիայի ազգային թրաստ»-ի կառույցում, այնուհետև՝ 2009 թվականի փետրվարին, հիմնադրվեց որպես բարեգործական կազմակերպություն: ԻՆԹՈՒ-ի անդամ կազմակերպությունները<sup>3</sup> կիսում են պարզ առաքելություն՝ օգնել մարդկանց հասկանալու իրենց ժառանգության արժեքը և պաշտպանելու այն:

Ներկայումս INTO-ն ունի 76 անդամ կազմակերպություններ; Վերջին տասը տարիների ընթացքում անդամակցությունը աճել է 2008 թ. 22-ից մինչև 2017-ը 76-ը: ԻՆԹՈՒ-ի օգնությամբ նոր թրաստներ են ստեղծվել են Չեխիայում և Վրաստանում:

Ժառանգության «արժեքը» հասկանալու խիստ անհրաժեշտություն կա նաև ՀՀ-ում, քանզի երբեմն, անգամ մասնագիտական և կառավարական ոլորտում է «մշակույթը» ընկալվում որպես այս կամ այն «արվեստի ճյուղ» և վերջինիս զարգացումն էլ դիտարկվում հենց այդ տեսանկյունից: Ուստի, մշակութային քաղաքականության համար կարող է արդյունավետ մոդել լինել թրաստային համակարգը և ԻՆԹՈՒ-ին անդամակցումը, քանի որ այն միջազգային այն հարթակն է, որը արդեն ունի հստակ մշակված քաղաքականություն վերոնշյալ խնդրի դեմ պայքարելու համար, և վերջինիս քաղաքականության տեղայնացումը կարող է մի շարք առավելություններ տալ Հայաստանին:

ԻՆԹՈՒ-ին անդամակցության առավելությունները.

- ազգային թրաստների և ժառանգության պահպանության կազմակերպությունների հետ համագործակցության հնարավորություն միջազգային հարթակում,
- ազգային թրաստ ստեղծելու հնարավորությունների ապահովում մասնագիտական և խորհրդատվական ցանցի շնորհիվ,
- աշխատանքային հնարավորությունների կազմակերպում, կամավորական ուժի տեղաբաշխումներ,
- տեղեկատվության մատչելիություն,<sup>4</sup>

<sup>1</sup> Թրաստի իրականացրած ծրագրերի թվում ուշագրավ էր 1978 թվականից իրականացվող քաղաքի անտեսված հատվածների վերականգնումը 200 համայնքների համար: Իսկ 1988 թվականից «ժառանգություն» ծրագրով վերականգնում է երկրի երկաթուղային ցանցը, բարելավում հարկային օրենքները, որոնք խոչընդոտում են ժառանգության արժեքների պահպանությանը: Թրաստը նաև ունի մրցանակաբաշխության հատուկ ծրագիր, որը ներառում է ժառանգության պահպանման գործում ունեցած ներդրման «Գաբրիել Լեգերի մեդալը» և ժառանգության հանդեպ առաջավոր ավանդի “Lieutenant Governor’s” մեդալը:

<https://www.thecanadianencyclopedia.ca/en/article/heritage-canada-foundation/>.

<sup>2</sup> International national trust organization, The National Trust movement, p. 4,

<https://intoorg.org/wp-content/uploads/2013/07/What-is-INTO-2013.pdf>, (20.05.2018).

<sup>3</sup> Համաձայն ԻՆԹՈՒ-ի կանոնադրության 5.1 հոդվածի, INTO անդամները՝ թրաստները «անկախ, ոչ պետական, բարեգործական, կրթական, շահույթ չհետապնդող, անդամակցության բնույթով կազմակերպություններ են, որոնք որպես հիմնական նպատակ ունեն մշակութային կամ բնական ժառանգության պահպանումը, զարգացումը կամ խթանումը»:

<sup>4</sup> ԻՆԹՈՒ-ի կայքէջը պահեստավորում է աշխարհի տարբեր թրաստների գործունեության փաստաթղթեր՝ օրենսդրություն, ռազմավարություն, բիզնես պլաններ՝ աջակցելու նմանատիպ խնդիրների առջև կանգնած այլ թրաստային կազմակերպություններին:

- միջազգային հարթակում թրաստային կազմակերպությունների կոնգրեսին մասնակցության և որոշումներ կայացնելու գործընթացի մասնակցություն,

- միջազգային իրավաբանական և օրենսդրական ցանցի միջոցով նյութական, ոչ նյութական և բնական ժառանգության պահպանության խնդիրների կարգավորում,

- գլոբալ ներուժի ստեղծում:

ԻՆԹՈՒ-ն խրախուսում է տարածաշրջանային ցանցերի ձևավորումը որպես անդամների համար ընդհանուր ժամանակակից խնդիրների լուծման ուղի: Ներկայումս գոյություն ունեն տարածաշրջանային հետևյալ խմբերը.

- Ազգային թրաստների Կարիբյան համաժողովը,
- Ազգային թրաստների Աֆրիկայան կազմակերպությունը,
- Ասիական ժառանգության ցանց:

ԻՆԹՈՒ-ի անդամ թրաստային կազմակերպությունները, բացի մշակութային ժառանգության պահպանությանից, զբաղվում են նաև համընդհանուր խնդիրների և մարտահրավերների լուծմամբ. միջազգային մակարդակում նոր հայեցակարգեր, հռչակագրեր և օրենսդրական դաշտի փոփոխություններ են առաջարկում ժառանգության պահպանության արդյունավետության բարձրացման համար: 2011 թվականի հոկտեմբեր ամսին տեղի ունեցած Ազգային թրաստների միջազգային 14-րդ կոնֆերանսը, որը կրում էր «Մարդկանց, տարածքների և պատմության միավորումը. նոր հայեցակարգ և ռազմավորության ժառանգության պահպանության համար փոփոխվող աշխարհում», 250 պատվիրակության անդամներով սատարեցին Վիկտորիայի հռչակագիրը: Այս գաղափարները դարձան գործիք հաջորդ` Դուբայում (2011 թ.) և Ուզանդայում (2013 թ.) տեղի ունեցած կոնֆերանսների ժամանակ, որտեղ ընդունվեց Էնթեբիի հռչակագիրը: Վիկտորիայի և Էնթեբիի հռչակագրերը մեծ ուշադրություն դարձրեցին մշակութային ժառանգության իրավունքին, որը կարևոր է սոցիալական ինքնության, բազմազանության պահպանման և կայունության համար<sup>1</sup>: Այս գաղափարները շարունակությունն էին ՅՈՒՆԵՍԿՕ-ի ընդունած «Մշակույթը որպես կայուն զարգացման բանալի Հնդգույի (Չինաստան, 2013 թ.) հռչակագրի, որտեղ մասնավորապես նշվում էր. «Յուրաքանչյուրի մշակույթի ընդունումը սոցիալական կայունության բնորոշ գիծն է, և հետևաբար, մշակութային ամբողջականության պահպանությունը մարդկանց իրավունքների մեջ ֆունդամենտալ տեղ ունի»:

ԻՆԹՈՒ-ին անդամակցումը Հայաստանի համար կնշանակի նաև Վիկտորիայի և Էնթեբիի հռչակագրերի ընդունում, որն էլ կնպաստի մշակութային ամբողջականության պահպանմանը, սոցիալական կայունությանը, հանդուրժողականությանը, մշակութային բազմազանության խթանմանը և մշակույթի իրացման իրավունքի գործնական կիրառմանը:

21-րդ դարում Ազգային թրաստները ստեղծվել են տարբեր նպատակներով, որոշները պահպանության գործընթացում ներգրավվածության, իսկ որոշներն էլ ինքնության շուրջ ծագած տարբեր կոնֆլիկտները հարթեցնելու համար, կամ ժառանգության շուրջ տեղի ունեցած ինչ-որ ճգնաժամի ազդեցությամբ, ինչպես օրինակ Սիեռա Լեոնեի<sup>2</sup>, Տրինիդատ և Տոբագոյի դեպքում<sup>3</sup>:

Ազգային թրաստների շարժումից անմասն չմնաց նաև Չինաստանը. Հոնգ-Կոնգում 2012-13 թվականներին ստեղծվեց «Հոնգ Կոնգի ազգային թրաստը» ժառանգության

<sup>1</sup> The Victoria declaration, on the implications for cultural sustainability of climate change, p.1-4. <https://into.org.org/wp-content/uploads/2013/07/INTO-THE-VICTORIA-DECLARATION-.pdf>, (20.05.2018).  
<sup>2</sup> Սիեռա Լեոնեի` լինելով աղքատ երկիր, գրկված է եղել մշակույթի իրավունքի իրացման հնարավորությունից, բայց թրաստի հիմնադրումը նպաստեց այն գիտակցությանը, որ ժառանգությունը առավել կարևոր է, քան աղքատությունը և պատերազմը: Թրաստի շնորհիվ արված մշակութային «հիշողությունների քարտեզագրում»-ը նպաստեց հակամարտության կարգավորմանը:  
<sup>3</sup> Տրինիդատ և Տոբագոյում (Իսպանիայի նավահանգիստ) Ազգային թրաստի ձևավորման ահազանգը հանդիսացավ 1985 թ. Ջորջ Բրաունի տան քանդման մտադրությունը, որի պաշտպանության համար ստեղծվեց «Քաղաքացիները հանուն պահպանության նախաձեռնությունը» <http://mndsi.gov.tt/statutory-authorities/the-national-trust-of-trinidad-and-tobago/#sthash.upTVORQA.dpbs>,(20.05.2018):

պահպանությամբ մտահոգված հավասարակշռված համայնք ունենալու համար. «Համայնքը չպետք է ակնկալի, որ կառավարությունը միայնակ լինի պատասխանատու Հոնկոնգի ժառանգության պահպանության գործում. ժառանգությունը այն է, ինչ համայնք է դարձնում այդպիսին»<sup>1</sup> :

**Թրաստային համակարգի ներդրումը հետխորհրդային երկրներում:** Ժառանգության թրաստ կարող է ստեղծվել նաև վերացնելու խորհրդային միության մշակութային քաղաքականության հետքերը, կամ վերականգնելու համայնքի դերակատարումը այդ գործում, և, այդպիսի փայլուն օրինակ դարձավ Չեխիան, որտեղ ազգային թրաստ ստեղծվեց հենց հետխորհրդային կարծրատիպերը քանդելու նպատակով: Դոկտոր Իրենա Էրվարդսը՝ Չեխիայի ազգային թրաստի նախագահը, նշել է, «Կոմունիստական դարաշրջանը բարի չէր մշակութային հուշարձանների հանդեպ: Այն սահմանափակում էր դրանց օգտագործման հնարավորությունները, հաճախ վնասում և ժողովրդի մեջ ոգեշնչում այն գաղափարները, որ ժառանգությունը ոչ մի կապ չունի նրանց հետ»<sup>2</sup>:

21-րդ դարի մշակութային ժառանգությանը սպառնացող մարտահրավերներին դիմակայելու լավագույն օրինակից օգտվեց նաև ՀՀ հարևան Վրաստանը: 2016 թվականին վերջինս անդամակցեց ԻՆԹՈՒ-ին, իսկ 2017 թվականին ստեղծեց թրաստը: Բացի Վրաստանի պատմական ճարտարապետության և լանդշաֆտի պահպանությունից, այն նաև սկսեց կրթել ու խթանել տեղական համայնքի մասնակցությունը մշակութային ժառանգության պահպանման կենսական և ընթացիկ գործընթացներին:

**Կամավորության ներուժը:** Երիտասարդ թրաստների հաջողության բանալին մարդկային ռեսուրսի՝ կամավորների պոտենցիալը օգտագործելու մեջ է: Ուժանդայի խաչամշակութային հիմնադրամը, Ինդոնեզիայի, Մալթայի և Մասաչուսեթսի թրաստները ունեն հստակ մշակված կամավորական և համայնքի ներգրավված մասնակցություն: Թրաստների կառավարման համակարգը ուսումնասիրելիս, հանգել ենք այն եզրակացության, որ կամավորները հավաքագրվում են սոցիալական լրատվամիջոցների, ծանուցումների, հատուկ կրթական ծրագրերի, ինչպես նաև թրաստներում բաց դռների օր հայտարարելով: Մեծ Բրիտանիայի ազգային թրաստները համաշխարհային առաջատարն են կամավորության թվաքանակի մեջ և ունեն ավելի քան 70,000 կամավոր:

**Հասարակական ակտիվության:** Քաղաքացիական հասարակությունը ժառանգության պահպանման գործում կենսական դեր ունի, և հաջողության հասնելու համար վերջինիս անդամները պետք է հավատան, որ միասին աշխատելը կարող է փոփոխություններ բերել և կազմակերպեն իրենց ընդհանուր կարիքները միասին լուծելու հնարավորություն<sup>3</sup>: Առավել մեծ հասարակական ներգրավվածության համար օգտագործելով ժառանգության տարածքը՝ թրաստները իրականացնում են վերապատրաստման սեմինարներ, դասընթացներ, հատուկ փառատոներ, միջոցառումներ, ցուցահանդեսներ՝ կրթական հնարավորություններ ընձեռելով այցելուներին, զովագրում են համապատասխան սոցիալական և տպագիր լրատվամիջոցներում, թրաստի պաշտպանության տակ գտնվող ժառանգության վայրերում կազմակերպում հատուկ գործողություններ և միջոցառումներ, զարգացնում համագործակցությունը այլ կազմակերպությունների (թանգարանների) կամ բիզնես վարող ընկերությունների հետ:

**Հայաստանի քաղաքացիական նախաձեռնությունները՝ որպես թրաստային շարժման նախահիմքեր:** Ինչպես նշեցինք վերևում, մշակութային ժառանգությունը սոցիալական կապիտալի ստեղծման<sup>4</sup> և կոլեկտիվ ինքության ձևավորման կարևոր գործոններից է, իսկ քաղաքացիական նախաձեռնությունները կարևոր դեր են կատարում հենց այդ

1 Heritage conservation position paper, april 2007, LC Paper No. CB(2)1646/06-07(01),

<http://www.legco.gov.hk/yr06-07/english/panels/ha/papers/ha0420cb2-1646-1-e.pdf>, (15.05.2018).

2 Edwards I. British and Czech lawyer, founder and chairman of the CNT and CNT Abroad, <https://www.czechnationaltrust.org/en/about-czech-national-trust-3/>, (18.05.2018).

<sup>3</sup> Flora, C.B., Flora, J.L. Spears, J.D. and L.E. Swanson. Rural Communities: Legacy and Change. Boulder, Colorado: Westview Press. 1992.

<sup>4</sup> Putnam R.. Bowling Alone: The Collapse and Revival of American Community, New York, Simon & Schuster, 2001, p. 455:

կապիտալի «ամրապնդման» գործում<sup>1</sup>: Դրանք ներքևից ձևավորված, կամավորական, անկուսակցական խմբեր են, որոնք համախմբվում են՝ միասին առաջ քաշելու որևէ հարց և բարձրացնելու հանրության իրազեկվածությունը վերջինիս վերաբերյալ<sup>2</sup> :

Ուսումնասիրելով թրաստային շարժման առաջացման և զարգացման նախադրյալները մի շարք երկրներում, հանգեցինք այն եզրակացության, որ գրեթե բոլոր տեղերում թրաստների ստեղծման շարժառիթը ժառանգության որևէ կառույցի (կամ քաղաքի, տարածքի, գյուղի) պահպանության համար ստեղծված քաղաքացիական նախաձեռնություններն էին, ինչպես օրինակ Մասսաչուսեթսի, Մեծ Բրիտանիայի, Ավստրալիայի, Չեխիայի, Սիերա Լեոնեի, Կրաստանի և շատ այլ թրաստների դեպքում: Այս երկրներում, մշակութային ժառանգության պահպանությամբ մտահոգ քաղաքացիները միավորվելով որևէ հրատապ խնդրի շուրջ, խնդրում էին հանրության աջակցությունը և ստեղծում թրաստներ: Քաղաքացիական շարժումների, նախաձեռնությունների և ակտիվիզմի այլ ձևերի զարգացման գործում առանցքային նշանակություն ունի գաղափարների, արժեքների հստակցեման և ինքնության ձևակերպման խնդիրը<sup>3</sup>: Թրաստները իրենց առջև նպատակ էին դնում, ոչ միայն տվյալ արժեքի պահպանության արդյունավետ համակարգի ստեղծումը, այլ առաջ էին քաշում ավելի գլոբալ քաղաքացիական պահանջներ, որի գերնպատակը մշակութային ժառանգության պահպանությամբ մտահոգ քաղաքացիների կոլլեկտիվ ինքնության ստեղծումն էր:

Քաղաքացիական հասարակությունը<sup>4</sup> Հայաստանում կարևորություն ստացավ 1980-ական թվականների վերջերին, երբ վերակառուցման ժամանակ թույլատրվեց պետությունից անկախ համայնքային գործունեությունը: Իսկ քաղաքացիական ակտիվության տիրապետող ձևը դարձավ քաղաքացիական նախաձեռնությունը, որի աճը և ծավալումը պարտական է երկու գործոնի: Առաջին՝ հայաստանցիների առաջին հետխորհրդային սերնդի չափահասության տարիքին հասնելը նշանակում էր, որ կա հայաստանցիների մի սերունդ, որը չի ապրել խորհրդային շրջանում, ուստի ունի տարբեր ակնկալիքներ և ըմբռնումներ պետությունից և քաղաքացիների հետ նրա փոխհարաբերությունից: Ի տարբերություն հայաստանցիների ավելի ավագ սերնդի, որոնք պնդում են. «դա պետք է անի պետությունը», քաղաքացիական նախաձեռնությունները պետությունից որևէ նման սպասելիք չունեն: Որպես այդպիսին, նրանք որդեգրում են ավելի գործուն մոտեցում հասարակության իրազեկվածության բարձրացման և խնդիրների հասցեագրման նկատմամբ: Երկրորդ՝ սոցիալական մեդիայի, այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների և սոցիալական ցանցերի մուտքը և տարածումը քաղաքացիական ակտիվիստներին շատ ավելի արդյունավետ և արագ կազմակերպման և մոբիլիզացման հնարավորություն ընձեռեց<sup>5</sup>: Հայաստանում ներքևից ձևավորված քաղաքացիական նախաձեռնությունները մեծ չափով օգտագործում են սոցիալական մեդիան իրենց գործողություններում՝ հասնելով ջանքերի համատեղման թե՛ վիրտուալ և թե՛ ֆիզիկական տիրույթներում<sup>6</sup>: Եվ գրեթե բոլոր մեծածավալ նախաձեռնությունները, որոնք ուղղված են եղել մշակութային ժառանգության պահպանությանը, առավել ընդգրկունություն են ստացել հենց սոցիալական մեդիայի շնորհիվ ստեղծված «հանրային միջավայր»-ում, որը ձևավորում է երկխոսության մշակույթ և խնդիրները լուծելու հորիզոնական, այլ ոչ թե հիերարխիկ հարթություն:

<sup>1</sup> Szreter S. The state of social capital: Bringing back in power, politics, and history. Theory and Society, p. 573-621, 2002.

<sup>2</sup> Իշխանյան Ա., Քաղաքացիական հասարակությունը, զարգացումը և բնապահպանական ակտիվիզմը Հայաստանում, Ե., 2013թ, էջ 27:

<sup>3</sup> Della Porta D., Diani M. 2006. Social Movements: An Introduction. Oxford: Blackwell Publishing, p.5-6.

<sup>4</sup> Мамут Л.С. Гражданское общество и государство: проблема соотношения. Общественные науки и современность, 2002, №5, с. 101.

<sup>5</sup> Mason. P. Why It's Still Kicking Off Everywhere, London, Verso, 2013.

<sup>6</sup> Թադևոսյան Ա., «Քաղաքացիական նախաձեռնությունները եվ նոր տեխնոլոգիաները Հայաստանում», Բաց հասարակության հիմնադրամներ, 2013, էջ 33-39:

Մշակութային ժառանգության պահպանությանն ուղղված քաղաքացիական նախաձեռնությունները Հայաստանում<sup>1</sup> լուրջ դերակատարում սկսեցին ունենալ սկսած 2010 թվականից և ընդգրկեցին թե՛ մարդու իրավունքների պաշտպանության, թե՛ բնապահպանության և թե՛ ժառանգության պահպանության ոլորտները: Այս նախաձեռնությունները կազմակերպվում էին երիտասարդ տարիքի, քաղաքացիական հստակ կեցված ունեցող մարդկանց կողմից, ովքեր դուրս էին գալիս կառավարության կամ տեղական ինքնակառավարման մարմինների կամ խոշոր բիզնեսի այս կամ այն անօրինական գործարքի դեմ և օրենքի անունից պահանջում վերականգնել արդարություն: 2010-2017 թվականներին մշակութային և բնական ժառանգության պահպանությանն ուղղված քաղաքացիական նախաձեռնությունները սկսեցին «քաղաքականը» «քաղաքացիական»-ով փոխարինելու իրենց առաքելությունը: Բոլոր նախաձեռնությունների հիմքը հորիզոնական կապերի առկայությունն ու ինքնակազմակերպման վրա խարսխվող գործողություններն էին: Մշակութային ժառանգության պահպանությանն ուղղված քաղաքացիական նախաձեռնությունները ոչ միայն պայքարում էին սովյալ արժեքի պահպանության համար, այլ իրականացնում շատ խորքային մի երևույթ. նրանք ձևակերպում էին պետական հիերարխիայից դուրս գտնվող մարդկանց հասարակական սուբյեկտությունը: Եվ այս կոնտեքստում հասարակությունը որդեգրեց ոչ թե Խորհրդային ժամանակներից ժառանգված ենթարկվողի կամ «թելադրվող քաղաքականությունը» վերարտադրողի, այլ օրենքի և իրավունքի հարթությունում փոխհարաբերվելու «թելադրողի» կարգավիճակը:

**Մշակութային և բնական ժառանգության պահպանության քաղաքացիական նախաձեռնությունների հաջողությունները Հայաստանում:** Թեև մշակութային ժառանգության պահպանության նախաձեռնություններից շատերը հանդիպում էին իշխանության ստեղծած պատնեշին և մի շարք արգելքների, բայց, համառ պայքարի արդյունքում Երևանի Նոր Նորքի վարչական տարածքում գտնվող «Վիշապների պուրակի»<sup>2</sup>, «Թռչկանի ջրվեժի պահպանման»<sup>3</sup>, «Մաշտոցի պուրակի վերականգման», «Գառնիի պատ-

<sup>1</sup> Մշակութային և բնական ժառանգության պահպանության քաղաքացիական նախաձեռնություններ. «Փրկենք Թեղուտը» (2007 թ. նոյեմբեր, Ե., ընթացիկ), «Փրկենք Վիշապների պուրակը» (2010 թ. նոյեմբեր, Ե., հանգուցալուծված դրականորեն), «Ջերմուկը հանք չի դառնա» (2011 թ. նոյեմբեր, Ջերմուկ, Ե., ընթացիկ), «SOS Հրազդան» 2011 թ. նոյեմբեր, Երևան- Հրազդան, դադարեցված), «Խոսքովի արգելոց» (2012 թ. հոկտեմբեր, Ե., դադարեցված), «Մաշտոցի պուրակ» (2012 թ. փետրվար, Ե., հանգուցալուծված դրականորեն), «Մենք ենք այս քաղաքի տերը», «Փրկենք ուսանողական այգին» (2010 թ. ապրիլ, Ե., հանգուցալուծված բացասականորեն), «Փրկենք Դուկաս Չուբարյանի տունը ոչնչացումից» (2011 թ. օգոստոս, Ե., դադարեցված), «Պահպանենք Թռչկանի ջրվեժը» (2011 թ. սեպտեմբեր, Ե., հանգուցալուծված դրականորեն), «Կանաչ Կապան», «Մենք դեմ ենք ուրանի բաց հանքի շահագործմանը» (2012 թ. փետրվար, Կապան, դադարեցված), «Մեր քաղաքը» (2010 թ. նոյեմբեր, Ե., ընթացիկ), «SOS! Փրկենք Մոսկվա կինոթատրոնի ամառային դահլիճը» (2010 թ. մարտ, Ե., հանգուցալուծված բացասականորեն), «Մենք դեմ ենք օտարալեզու դպրոցների վերաբացմանը» (2010 թ. ապրիլ, Ե., ընթացիկ), «Դեմ ենք ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանի տան ոչնչացմանը» (2011 թ. հոկտեմբեր, Երևան հանգուցալուծված բացասականորեն), «Լրամի խաչմերուկ» (2011 թ. նոյեմբեր, Ե., դադարեցված), «Պահանջում ենք վերադարձնել Մինաս Ավետիսյանի որմնանկարները» (2011 թ. հունիս, Գյումրի, հանգուցալուծված բացասականորեն), «SOS! Պահպանենք Աֆրիկյանների ակումբի դեմքը» (2011 թ. հուլիս, Ե., ընթացիկ), «Փրկենք Դուկաս Չուբարյանի տունը ոչնչացումից» (2011 թ. օգոստոս, Ե., դադարեցված), «Փրկենք Փակ շուկան» (2012 թ. մայիս, Ե., ընթացիկ), «Գնում ենք Գառնու կաֆեի ավազը դատարկենք» (2014 թ., Գառնի, հանգուցալուծված դրականորեն), «Կրթական քաղաքացիական նախաձեռնություն» (2017 թ. ապրիլ, Ե., ընթացիկ), «Դեմ ենք Ամուսարի հանքի շահագործմանը» (2018 թ. Ջերմուկ, ընթացիկ), «Դալմայի այգիներ», (2018 թ. հունվար, ընթացիկ):

<sup>2</sup> Երևան քաղաքի Նոր Նորքի վարչական տարածքում «Վիշապների պուրակը» անվանումը կրող, շուրջ 2000 քառակուսի մետր ծառածածկ տարածքը քանդելու և դրա տեղում բազմաբնակարան բարձրահարկ շենք կառուցելու դեմ: Պայքարին միացան նաև տեղի բնակիչները: Պայքարը տևեց մինչև 2011 թ. օգոստոս և պակվեց հաջողությամբ:

<sup>3</sup> Թռչկանի ջրվեժը գտնվում է Լոռու և Շիրակի մարզերի սահմանագծին, Փամբակ գետի գեղատեսիլ վտակներից մեկի Չիչխանի վրա: Այն ներառված է որպես ջրագրական հուշարձան, ներառված է Հայաստանի բնության հուշարձանների շարքում: Քաղաքացիական նախաձեռնության հիմնական դրդապատճառն այն էր, որ նախատեսվում էր այդտեղ կառուցել հիդրոէլեկտրակայան, որի գործարկումը փաստացիորեն հանգեցնելու էր ջրվեժի ոչնչացմանը:

մամշակութային արգելոց-թանգարանի» քաղաքացիական նախաձեռնությունները հաջողությամբ պսակվեցին: Այս համատեքստում խիստ կարևոր էր նաև Թեղուտի քաղաքացիական նախաձեռնությունը հանքարդյունաբերության դեմ, որը, գրանցեց և շարունակում է գրանցել թե՛ մարտավարական, թե՛ գաղափարաբանական և թե՛ սկզբունքային շատ հաղթանակներ:

2010-2018 թվականների ընթացքում կազմավորված՝ մշակութային ժառանգության պահպանությանն ուղղված 23 նախաձեռնություններից ընդամենը 4-ն են հանգուցալուծվել դրականորեն, 9-ը դադարեցվել են, 8-ը դեռ ընթացքի մեջ են, իսկ մի քանիսի կարգավիճակն էլ շարունակվում է մնալ անորոշ: Վերլուծելով այս ցուցանիշները, պետք է ասել, որ նախաձեռնությունների հաջողության ցուցանիշը շատ փոքր է: Սա նշանակում է, որ իշխանությունը պատրաստ չէ գնալ երկխոսության և հաշվի առնել հասարակության կարծիքը: Հաջորդ խնդիրը նախաձեռնությունների տեղաբաշխման անհամաչափությունն է, և եթե դիտարկենք տարածքային տեղաբաշխման քարտեզը, ապա կտեսնենք, որ 23-ից 19-ը Երևանում է, մնացած 5-ը տարբեր մարզերի քաղաքներում (Հրազդան, Ջերմուկ, Գյումրի, Գառնի), իսկ 2-ն էլ թե՛ Երևանում և թե՛ մարզում: Սա նշանակում է որ մարզերում դեռևս իշխում է խոսքի փոխանակման ոչ թե հանրային, այլ փակ համակարգը:

Հայաստանում քաղաքացիական նախաձեռնությունների ընթացքում առաջ մղվեց ակտիվ և «գորացված քաղաքացիության» (empowered citizenship) մի ձև, որը կապում է քաղաքացիների իրավունքներն այն պատասխանատվություններին, որ նրանք պետք է ունենան իրենց համայնքների ու երկրի առաջ և դառնալ ակտիվ սուբյեկտներ, ովքեր ավելի շուտ բարձրաձայնում են իրենց մտահոգությունների մասին, քան մնում լուռ դիտորդներ<sup>1</sup>: «Մաշտոցի պուրակի պաշտպանության» քաղաքացիական նախաձեռնության կարգախոսներից մեկն էր «Ինքնորոշված քաղաքացու ժամանակը», սա մատնանաշում էր, որ նրանք այնպիսի քաղաքացիներ են, որոնք ինքնորոշվել են՝ պայքարելու ոչ միայն մշակութային ժառանգության կամ բնապահպանության արժեքի համար, այլ կոռուպցիայի, օլիգարխիայի և հանրային շահի նկատմամբ մասնավոր շահը գերադասելու տիրող դրության դեմ<sup>2</sup>: Այս նախաձեռնության նպատակներն ու խնդիրներն էին. զարգացնել մի օրակարգ, որը քաջալերում է քաղաքացիական մասնակցությունը, օրենքի գերակայության նկատմամբ հարգանքը ու կայուն զարգացումը<sup>3</sup>: Այս քաղաքացիական նախաձեռնությունը լուրջ քայլ էր հասարակության առողջացման ճանապարհին, և «Մենք ենք տերը երկրի» կարգախոսով ասպարեզ մտած կազմակերպված քաղաքացիներին պատրաստ չէ ընդունել երկիրը. այն պատրաստ չէ իրագործել «իր նոր տերերի» պահանջները<sup>4</sup>: Իսկ Վիշապների պուրակի համար կազմակերպված պայքարի արդյունքները դիտարկելով, հասկանալի էր, որ հասարակության որոշ շրջանակներում ձևավորել է նոր գիտակցում, որ նախ, հանրային տարածքների մասին որոշումներ կայացնելիս պետական իշխանությունները պետք է հաշվի առնեն նաև հանրության կարծիքը և, երկրորդ, հանրությունը իրավունք ունի պայքարելու դրանց կամայական շահագործման փորձերի դեմ:

Ժառանգության թրաստների գործառույթներից ամենակարևորը, ըստ երևույթին ժառանգության տարածքները «հանրային միջավայր» դաձնելու «քաղաքականության» մեջ է, գրեթե բոլոր թրաստները ունեն հատուկ ծրագրեր, որոնք ժառանգության թրաստ-

<sup>1</sup> Howell, J. & Pearce, J. 2001. Civil Society and Development: A Critical Exploration Boulder, Colorado, Lynne Rienner Publishers.p.237.

<sup>2</sup> Wallace K. Happenings At Mashtots Park, 2012. <http://organize-now.am/en/2012/03/02/796/>, (10.04.2018).

<sup>3</sup> Իշխանյան Ա., Քաղաքացիական հասարակությունը, զարգացումը և բնապահպանական ակտիվիզմը Հայաստանում, էջ 36: Քաղաքացիների կոչը այսպիսին էր. Մենք՝ ՀՀ քաղաքացիներս կենսագործում ենք մեր սահմանադրական իրավունքն ու պարտականությունը և լինելով այս հանրային տարածքի ու սեփականության, մեր քաղաքի և պետության տերը՝ պահանջել ենք մեր ժառանգողներից՝ քաղաքային և այլ մարմինների ներկայացուցիչներից, կատարելու իրենց սահմանադրական գործառույթներն ու պարտականությունները, որի համար նրանք վճարվում են հանրության կողմից:

<sup>4</sup> Սարգսյան Մ.Ուազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի ուրվագիր, ՈԱՀՀԿ, Հասարակության եւ պետության առողջացման ճանապարհին, 2018, էջ 10:

ների պահպանման ենթակա տարածքը դարձնում են հանրային քննարկումների, դասախոսությունների և պարզապես խնդիրները քննարկելու հարթակ, ինչպես նաև նպաստում երկխոսության մշակույթի ձևավորմանը: Մաշտոցի պուրակի պաշտպանությունը Հայաստանում դարձավ հենց այդպիսի հանրային միջավայրի առաջին նախադեպը, որը ձևավորվում էր ոչ թե պետության, այլ՝ քաղաքացիների կողմից<sup>1</sup>: Հայաստանում ձևավորվեց այն, ինչին քննադատական տեսության հայտնի ներկայացուցիչ Յուրգեն Հաբերմասը տվել է “public sphere” ձևակերպումը: Վերջինս այնպիսի մի տեղ է, ուր կարող են հավաքվել մեկից ավելի մարդիկ և իրականացնելով խոսքի փոխանակում, ռացիոնալ փաստարկի հիման վրա հասնել փոխըմբռման: Հենց նման երկխոսության ունակ մարդկանց էլ նա անվանում է քաղաքացիներ<sup>2</sup>: Այսինքն, հանրային միջավայրը կամ տարածքը դա մի տեղ է, որտեղ ձևավորվում է և որտեղից տարածվում է քաղաքացիական մշակույթը: Մաշտոցի պուրակի պաշտպանության համար 2012 թ. փետրվար-մարտ ամիսներին կազմակերպված նախաձեռնությունը նպաստեց նաև քաղաքացու սուբյեկտության ձևակերպման ու ձևավորման գործընթացներին: Մյուս աչքի ընկնող առանձնահատկությունը պայքարի ստեղծագործականությունն էր: Այստեղ սկսեցին կազմակերպվել բացօթյա դասախոսություններ, վերլուծական ելույթներ, բանաստեղծությունների ընթերցում, համերգներ, լուսանկարների ցուցահանդես և այլ բնույթի միջոցառումներ, որոնք նպաստում էին, որ այս տարածքը իրականորեն վերածվեր հաղորդակցվելու, խոսքի, գիտելիքի, գեղագիտական և բարոյական տեսանկյունների փոխանակության տարածքի: Կարելի է ասել, որ Մաշտոցի պուրակի պայքարը Հայաստանում բարձրացրեց ու իրացրեց հասարակական հարաբերությունների մոդեռնացման խնդիրը:

«Թեղուտի պաշտպանության քաղաքացիական նախաձեռնությունը», որը ձևավորվեց 2007 թ., նպատակ ուներ «պաշտպանելու Թեղուտ և Շնող գյուղերի բնակիչների սեփականության, առողջ շրջակա միջավայրում ապրելու և արժանապատիվ աշխատանք ունենալու իրավունքերը»: ԹՊՔՆ-ը դարձավ կենտրոնական հանգույց մտահոգ քաղաքացիների համար՝ հանդիպելու միմյանց, հարցեր քննարկելու, օրենսդրության և ծրագրային քաղաքականությունների մասին ինքակրթվելու, ինչպես նաև կապեր ու ցանցեր հաստատելու համար: Այն նաև համախմբող հարթակ դարձավ այլ քաղաքացիական նախաձեռնությունների համար:

Թեղուտի քաղաքացիական նախաձեռնության ձեռքբերումներից մեկն այն էր, որ մշակութային ժառանգության պահպանության ոլորտը կապվեց մարդու իրավունքների, ժողովրդավարության, տնտեսական, սոցիալական և քաղաքական ոլորտների հետ: Քաղաքացիական դաշտում «Թեղուտի պաշտպանության նախաձեռնությունը» սերընդափոխություն բերեց: Խոսքը գնում է հենց այն սերնդի մասին, որը չի ապրել Խորհրդային Հայաստանում, պետական պաշտոնյաների նկատմամբ ակնածանք չունի, այլ նրանց դիտում է որպես պետական ծառայողներ, վախի գործոնը անհամեմատ ավելի թույլ է, ֆինանսապես անկախ են, կարողանում են օգտվել ժամանակակից տեխնոլոգիաներից, առաջնորդվում են ոչ թե մրցակցության, այլ համագործակցության սկզբունքներով:

«Գնում ենք Գառնու կաֆեի ավազը դատարկենք» նախաձեռնությունը, որը նույնպես մեծ թափ ստացածներից էր, կազմավորվեց 2013 թվականի դեկտեմբեր ամսին՝ «Պատմամշակութային արգելոց-թանգարան» ՊՈԱԿ-ի տնօրեն Վլադիմիր Պողոսյանի հայտարարությունից հետո. «Գառնու տաճարի հարևանությամբ սրճարան է կառուցվելու, որը գտնվելու է Գառնի հեթանոսական տաճարի հարևանությամբ գտնվող բաղնիքի վերևում»: Քաղաքացիական նախաձեռնության մասնակիցներն ակտիվ գործողությունների դիմեցին և տարածքից տեղափոխեցին շինանյութը: Հանրության ընդվզումը

<sup>1</sup> Թադևոսյան Ա., Քաղաքացիական նախաձեռնությունները և նոր տեխնոլոգիաները Հայաստանում, Բաց հասարակության հիմնադրամներ, 2013, էջ 9 -16:

<sup>2</sup> Habermas J., Lennox S., Lennox F. 1974 The Public Sphere: An Encyclopedia Article. New German Critique, No. 3. (Autumn, 1974), p. 49.



Կառավարությանը հարկադրեց քննության առնել սրճարան կառուցելու մշակույթի նախարարության նախաձեռնությունը:

Վերջերս ծավալվեց նաև Ամուլսարի ոսկու հանքավայրի շահագործման դեմ իրականացվող քաղաքացիական նախաձեռնությունը<sup>1</sup>: Չնայած Հայաստանի գրեթե բոլոր անկախ մասնագետների, կազմակերպությունների, Ջերմուկի և Գնդեվազի բնակչության մեծ մասի բացասական կարծիքի, Հայաստանի կառավարությունը թույլ է տվել այս ծրագրի իրականացումը, որն անկառավարելի վտանգ է ոչ միայն Արփա և Որոտան գետերի ավազանների բնական միջավայրի, այլ նաև Սևանա լճի համար:

2018 թ. հունվարին բնական ժառանգության պահպանությանն էր ուղղված նաև Երևանում Սյասնիկյանի արձանին հարող այգու ծառերի հատումը. քաղաքացիների ձևակերպված պահանջը հետևյալն էր. «Ինչու՞ եք հատել մեզ պատկանող ծառերը առանց մեր թույլտվության»: Եվ կարելի է ասել, որ սա Թեղուտի պաշտպանությունից սկսված «կանաչ» իրավունքների պաշտպանության ուղղված ևս մեկ փորձ էր:

2018 թ. հունվարին բնական ժառանգության և մարդու իրավունքների պաշտպանության համար մղվող պայքար էր «Դալմայի այգիների պաշտպանության» քաղաքացիական նախաձեռնությունը: Դալմայի այգիների նախկին հողօգտագործողները բողոքի ակցիա անցկացրեցին ՀՀ նախագահի նստավայրի հարևանությամբ՝ պահանջելով իրենցից խլած հողերի դիմաց փոխհատուցում, քանի որ խախտվել էր իրենց հողի սեփականության իրավունքը:

Կարելի է եզրակացնել, որ չնայած իրենց հանդեպ ժխտողականության և անվստահության մթնոլորտի խտացմանը, Հայաստանի քաղաքացիական ակտիվիստները կարողացան ոչ միայն լուծել առաջադրված մի շարք խնդիրներ, այլև նոր փիլիսոփայություն հաստատել երկրում: Ժողովրդավարության գաղափարները ջարդեցին պետական մտածողության կարծրատիպերը՝ հասարակական գործածության մեջ դնելով «ինքնորոշված քաղաքացի» հասկացությունը: Արմատապես փոխվեց մշակութային պահանջների, ինչպես նաև առաջադրված նպատակներին հասնելու եղանակների իմաստը:

Բնական և մշակութային ժառանգության պահպանության նախաձեռնությունների հաջողությունները խոսում են Հայաստանում առկա թրաստային շարժման նախահիմքերի մասին. բայց կան խնդիրներ, որոնք դեռ համակարգային լուծման կարիք ունեն. դրանցից է քաղաքացիական թույլ մշակույթը, մարդկային ռեսուրսի պակասը, կոլեկտիվ ինքնության ձևավորման անհրաժեշտությունը, ակտիվիստները որակական աճի խնդիրը: Ավելին, նրանց ջանքերի համար հավելյալ բարդություններ են հարուցում անտարբերությունը և վախը, որ առկա է Հայաստանի բազմաթիվ համայնքներում:

Այսպիսով՝ ժամանակակից հասարակությունների մշակութային կյանքում քաղաքացիների շահերն ու պահանջմունքները չեն կարող իրացվել միայն պետական իշխանության ինստիտուտների կողմից: Թրաստային համակարգը կարող է նոր ճանապարհ բացել ՀՀ-ի համար մշակութային ժառանգության պահպանության այլընտրանքային մոդել ստեղծելով՝ հիմքում դիտարկելով կոլլեկտիվ գործողությունների մեթոդը և համայնական պահպանության գաղափարը: Հայաստանի ազգային թրաստային համակարգի ստեղծումը կնպաստի մշակութային և բնական ժառանգության և մշակութային բազմազանության ճանաչմանը. այն կարող է ստեղծել ժողովրդավարության և ազգային ինքնության նոր դարաշրջան՝ արձագանքելով հասարակության բազմաթիվ չկատարված կարիքներին, որոնք կարևոր են ժառանգության պահպանման և համայնքի համախմբման համար:

**Армине Тигранян, Тростовая система защиты культурного наследия: принципы и процессы Армении. Интересы и потребности граждан в культурной жизни современности**

<sup>1</sup> Գտնվում է Վայոց Ձորի և Սյունիքի մարզերի սահմանագլխին, Արփա և Որոտան գետերի ջրավաք ավազանում, Ջերմուկից մոտ 7 կմ հեռավորության և ծովի մակարդակից 2800-3000 մետր բարձրության վրա: Այն ցանկանում է շահագործել 2005 թ. Մեծ Բրիտանիայի օֆշորային ընկերությունը:

менных обществ не могут быть реализованы только институтами государственной власти. Трастовая система для Армении может открыть новый путь, создавая альтернативную модель защиты культурного наследия, учитывая метод коллективных действий и идею общинной защиты. Создание Армянской национальной трастовой системы будет способствовать признанию культурного и природного наследия, а также культурного разнообразия: он может создать новую эпоху демократии и национальной идентичности, отвечая на многие неудовлетворенные потребности общества, которые важны для сохранения наследия и укрепления общества.

*Ключевые слова:* культурное наследие, трастовая система охраны, гражданские инициативы, государственное восприятие сохранения, общественное сохранение культуры.

**Armine Tigranyan, The Trust system of the cultural heritage sustenance. The principles and the Armenian processes.** In the cultural life of modern society the proceedings and demands can not be accomplished only by national institutions. Trust system can open new ways for Armenia by creating alternative model of cultural heritage sustenance basing on the method of collective actions and the conception of community sustenance. The creation of Armenian national trust system will promote the recognition of cultural heritage and cultural multiplicity. It can create new area of democracy and national identity, responding to different unfulfilled needs of society ,which are very important for heritage conservation and community consolidation.

*Key words:* cultural heritage, trust system for preservation, civil initiatives, state conservation perceptions, community preservation.